600.0202.24.05.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մայիսի 2017 թվականի №202Ա
քաղ. Երևան

«ՊՐԵՍՏԻԺ ԼԵՆԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ 152.100 ՄՀՑ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2017 թվականի ապրիլի 26-ի №09/11.1/6655-17 գրությամբ ներկայացված տեղեկատվությունն այն մասին, որ «ՏԱՔՍԻ ՊՐԵՍՏԻԺ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն (վերանվանված «ՊՐԵՍՏԻԺ ԼԵՆԴ» սահամանափակ պատասխանատվությամբ ընկերության) առանց ռադիոհաճախականության օգտագործման համար պահանջվող թույլտվության օգտագործում է 152.100 ՄՀց ռադիոհաճախականությունը,

բ) «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2017 թվականի ապրիլի 20-ի առանց թույլտվության ռադիոհաճախականության օգտագործման հետազոտության արդյունքների №2004 ակտը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 5-րդ հոդվածի 2-րդ մասի «ժդ» կետը, 3-րդ մասի «ե» կետը և 60-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ՊՐԵՍՏԻԺ ԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 152.100 ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը և այդ մասին եռօրյա

ժամկետում տեղեկացնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՊՐԵՍՏԻԺ ԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
24 մայիսի 2017թ.